



ԿՈՐՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ.
ԿՈՐՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԻ
ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

ԴԱՍ 9



ԿՈՐՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. ԿՈՐՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

«Չեռաուսուցման դասընթացների մշակում Արդարադատության ակադեմիայի համար» ծրագիրը ֆինանսավորվել է ԱՄՆ Պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից և իրականացվել է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության կողմից՝ Արդարադատության ակադեմիայի հետ գործընկերությամբ: Սույն նյութում արտացոլված են հեղինակների տեսակետները, մեկնաբանությունները և եզրակացությունները, որոնք կարող են չհամընկնել ԱՄՆ Պետքարտուղարության տեսակետների հետ:



ԴԱՍ 9

ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ
ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԱՌԱՆՁԻՆ ՅԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ




ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս դասը կազմված է հետևյալ 4 բաղադրիչներից.
մոտիվացնող ներածական տեսանյութ,
դասի տեսական նյութ,
բառարան և
ինքնաստուգիչ հարցեր:
Բոլոր բաղադրիչների յուրացման համար
Ձեզ հարկավոր է 4 ժամ:

Ինքնաստուգիչ հարցերը և բացատրություններով
ուղեկցվող դրանց պատասխանները ներառված չեն
այս ձեռնարկում:

ՄՈՏԻՎԱԶՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ



Տեսանյութն ուղարկությամբ
ուսումնասիրելու համար անհրաժեշտ է
մոտ 5 րոպե:

Ուղարկությամբ
կարդացեք դասի
տեսական մասը՝
օգտվելով բառարանից,
և այն յուրացնելուց հետո
միայն պատասխանեք
ինքնաստուգիչ
հարցերին:
Այս աշխատանքների
համար անհրաժեշտ է
մոտ 205 րոպե:

Մտապահեք ապօրինի
հարստացման
հանցակազմի
օրենսդրական
բնորոշումը:

Լոռուպցիոն հանցագործություններով
ապացուցման բեռի բաշխման առանձնահատ-
կությունների մասին խոսելիս պետք է անդրա-
դառնալ ապօրինի հարստացման հանցակազ-
մին: ՀՀ գործող քրեական օրենսգրքի 310.1-
ին հոդվածով նախատեսված և արդեն իսկ
քննարկված ապօրինի հարստացման հանցա-
կազմի օրենսդրական բնորոշման համաձայն՝
*«Ապօրինի հարստանալը՝ «Հանրային ծա-
ռայության մասին» ՀՀ օրենքով սահման-
ված՝ հայրարարագիր ներկայացնելու պար-
տականություն ունեցող անձի՝ հաշվերու
ժամանակահատվածում գույքի ավելացու-
մը և (կամ) պարտավորությունների նվազու-
մը, որոնք էականորեն գերազանցում են նրա
օրինական եկամուտները և ողջամտորեն
չեն հիմնավորվում դրանցով, և եթե ապօրի-
նի հարստացման համար հիմք հանդիսացող
այլ հանցագործության հարկանիշները բա-
ցակայում են՝ (...):»:*

Քննարկվող հանցակազմի հետ կապված՝ տեսության մեջ և գործնականում քննարկվում է անմեղության կանխավարկածի սկզբունքի հնարավոր ոչ իրավաչափ սահմանափակման հարցն այնքանով, որքանով այն նախատեսում է ապացուցման բեռի ընդհանուր պահանջից շեղման հնարավորություն: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է նրան, որ, որպես կանոն, մեղադրանքի կողմն է կրում քրեական գործերով մեղադրանքի ապացուցման պարտականությունը: Մինչդեռ, ապօրինի հարստացման դեպքի վերաբերյալ հարուցված քրեական գործով ապացուցման պարտականությունը կարող է դրվել մեղադրյալի վրա, և վերջինիս կողմից իր անմեղությունը հիմնավորող ապացույցներ ներկայացնելու հարցում ձախողումը կարող է հանգեցնել վերջինիս դատապարտման:

Ըստ Ձեզ՝ ապացուցման բեռը ենթադրյալ հանցանք կատարած անձի վրա դնելն անմեղության կանխավարկածի խախտում է, թե՞ ոչ:

Եվ հենց անմեղության կանխավարկածի հետ հակասության հիմքով բազմաթիվ երկրներում մեղադրյալների կողմից բարձրացվել է ապօրինի հարստացման համար քրեական պատասխանատվության իրավաչափության հարցը: Ուստի, առաջին հերթին քննարկման կարիք ունի այն հարցը, թե արդյոք այդ հակասությունն առկա է, թե ոչ, և որոնք են այս առնչությամբ վերջին իրավական զարգացումները:

Նպատակահարմար է քննարկվող հարցին անդրադառնալու համատեքստում սկսել ՀՀ Սահմանադրության մեջ փոփոխությունների արդյունքում այս սկզբունքի սահմանադրական բնորոշման զարգացումներից: Այսպես, եթե 1995թ.-ին ընդունված ՀՀ Սահմանադրության, ինչպես նաև 2005թ.-ի սահմանադրական փոփոխություններով տեքստը, ի թիվս անմեղության կանխավարկածի այլ տարրերի, հստակ ընդգծում էին, որ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը (համապատասխանաբար 41-րդ և 21-րդ հոդվածներ): Մինչդեռ 2015թ.-ի դեկ-

տեմբերի 6-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածը միայն սահմանում է, որ. «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»: Հետևաբար, օրենսդրորեն մեղադրյալի վրա առանձին դեպքերում որոշակի ապացուցման բեռ դնելը ՀՀ Սահմանադրության հետ հակասության մեջ չի մտնի:

Սակայն, ինչ վերաբերում է գործող քրեադատավարական կարգավորմանը, ապա պետք է փաստել, որ անմեղության կանխավարկածի քրեադատավարական բնորոշումը ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի ընդունումից ի վեր օրենսդրական փոփոխության կամ լրացման չի ենթարկվել, որը, ի թիվս այլնի, նախատեսում է, որ կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Սակայն ինչ վերաբերում է ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքին, ապա թեև այն նախատեսում է, որ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը կամ քրեական վարույթն իրականացնող մարմնին ցույց տալ որևէ աջակցություն, և որ մեղադրյալի անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել նաև նրա պաշտպանի, օրինական ներկայացուցչի, գույքային պատասխանողի և նրա ներկայացուցչի վրա, իսկ մեղադրանքի ապացուցման և ի պաշտպանություն մեղադրյալի բերված փաստարկների հերքման պարտականությունը հանրային քրեական հետապնդման դեպքում կրում է դատախազը, իսկ մինչդատական վարույթում՝ նաև քննիչը, այդուհանդերձ նույն օրենսգրքի 106-րդ հոդվածով նախատեսված փաստերի իրավական կանխավարկածի համաձայն՝ եթե քրեական վարույթի ընթացքում հակառակը չի ապացուցվում, ապա ապացուցված են համարվում

- 1** հանրահայտ փաստը,
- 2** արդի գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ այլ բնագավառների համընդհանուր ճանաչում ստացած մեթոդիկաների ճշմարտացիությունը,
- 3** փաստը, որն անձին հայտնի է կամ պետք է հայտնի լիներ իրավական ակտով կամ պայմանագրով սահմանված իր մասնագիտական կամ պաշտոնական պարտականությունների կապակցությամբ,

4 փաստը, որը մեղադրյալին հայտնի է կամ պետք է հայտնի լիներ՝ որպես նրա բացառիկ իրազեկության հանգամանք:

Դատավարական հավասարության պահպանման համար՝ ապացուցման պարտականությունը կողմի վրա դրվում է հետևյալ պայմաններում.

1 իր նյութական և կազմակերպական հնարավորություններով տվյալ կողմը փաստականորեն առավել ուժեղ է ապացուցման ընթացքում, քան նրա ընդդիմադիր կողմը,

2 հանգամանքներ, որոնք ենթակա են տվյալ կողմի կողմից ապացուցման և նրա համար օբյեկտիվորեն հասանելի են (1):

Այս մոտեցման մեկնաբանությունն այն է, որ ապացուցման բեռի բաշխման առումով առանձնացված են երկու կարևոր չափանիշ. առաջին՝ ապացուցման գործընթացում կողմի նյութական և կազմակերպական հնարավորությունները, երկրորդ՝ կողմի բացառիկ իրազեկված լինելը (2):

Քննարկվող խնդրի առնչությամբ տեղին է հիշատակել Սալարյակուն ընդդեմ Ֆրանսիայի գործով Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի որդեգրած մոտեցումը: Այսպես, նշված գործով Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ իրավունքի և փաստի կանխավարկածները գործում են տարբեր իրավական համակարգերում: Եվրոպական կոնվենցիան սկզբունքորեն չի արգելում նման կանխավարկածները: Այնուամենայնիվ, այն պահանջում է անդամ պետություններին այս առնչությամբ մնալ որոշակի սահմանների մեջ՝ հաշվի առնելով վտանգվող արժեքի կարևորությունը և ապահովելով պաշտպանության կողմի իրավունքները (3):

Մեկ այլ՝ Փամ Հոանգն ընդդեմ Ֆրանսիայի գործով կասկածյալը ձերբակալվել էր Ֆրանսիայի սահմանին՝ թմրամիջոց տեղափոխելիս: Ֆրանսիական օրենսդրությո-

Ուշադիր կարդացեք և մտապահեք այն պայմանները, որոնց դեպքում ապացուցման պարտականությունը դրվում է կողմի վրա:

յունը սահմանում է, որ արգելված ապրանքներ տեղափոխելը, որոնց թվին է դասվում նաև հերոինը, համարվում է անօրինական, եթե այդ ապրանքը տեղափոխող անձը չի ապացուցում հակառակը, օրինակ՝ չի ներկայացնում արդարացնող բավարար ապացույցներ կամ չի ապացուցում, որ գործողությունը կատարվել է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կամ սխալի հետևանք է, որից խուսափելն անհնար էր: Նշված գործում պաշտպանության կողմը չի ներկայացրել արդարացնող ապացույցներ, իսկ մեղադրյալը հրաժարվել է տալ որևէ բացատրություն: Եվրոպական դատարանը, քննելով դիմողի բողոքը, ընդունել է, որ անթույլատրելի ոչինչ չկա այն ենթադրությունում, թե անձը, ով տիրապետում է ընդհանուր առմամբ արգելված որևէ բանի, պարտավոր է բավարար չափով բացատրել այդ փաստը, հակառակ դեպքում նա կճանաչվի մեղավոր: Եվրոպական դատարանը նման հետևության է հանգել նաև X.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության գործում: Հանձնաժողովը կիրառելի է համարել այն կանխավարկածը, որ դիմողը, ով, ինչպես պարզվել էր, ապրում էր մարմնավաճառությամբ զբաղվող մի կնոջ հետ, և հնարավոր է՝ նրա կավատն էր, գոյատևում էր բարոյագուրկ ճանապարհով ստացվող եկամուտներով (4):

Վերոգրյալի համատեքստում փաստվում է, որ առհասարակ, և ապօրինի հարստացման հանցակազմի համատեքստում մեղադրյալի վրա որոշակի ապացուցման բեռ դնելը չի հակասում անմեղության կանխավարկածի սկզբունքին: Եվ այս տեսանկյունից հիմնական պատճառաբանությունն այն է, որ հանրային հատվածում կոռուպցիայի դեմ պայքարի հանրային շահի տեսանկյունից ապացուցման բեռի նման բաշխումն իրավաչափ է: Այս տեսակետի կողմնակիցների հիմնական պնդումն այն է, որ եկամուտների ծագման օրինականությունն ապացուցելու պարտականությունը մեղադրյալի վրա դնելը չի հակասում անմեղության կանխավարկածի սկզբունքին, քանի որ համապատասխան տեղեկությունների միակ աղբյուրը հենց մեղադրյալն է, և այդ առումով մեղադրանքի կողմը հակառակ կարգավորման պարագայում կարող է լուրջ դժվարություններ ունենալ: Բայց կա նաև հակառակ տեսակետը, որ անկախ օրենսդրի մոտեցումից կամ դատական պրակտիկայում տրված մեկնաբանություններից՝ ապօրինի հարստացման հանցակազմն ապացուցման որոշակի բեռ մեղադրյալի վրա դնելու մասով հակասում է անմեղության կանխավարկածի սկզբունքին:

Մեղադրանքի կողմը հաղթահարում է անմեղության կանխավարկածի սկզբունքը, երբ հիմնավոր կասկածից վեր ապացուցում է հանցակազմի բոլոր տարրերը, այդուհանդերձ, մեղադրյալի վրա այս հանցակազմի կենտրոնական տարրի՝ եկամուտների ծագման օրինականությունն ապացուցելու պարտականություն դնելը թուլացնում է անմեղության կանխավարկածի սկզբունքի հիմքերը:

Այս մեկնաբանությունն առկա է նաև, օրինակ, Կանադայի դատական պրակտիկայում՝ համաձայն որի, անմեղ համարվելու իրավունքը տարածվում է հանցակազմի յուրաքանչյուր էական տարրի վրա: Այս մոդելը պահանջում է որոշակի երաշխիքների առկայություն, որ անմեղ անձը չի դատապարտվի, և բացառվի ապացուցման բարդ տարրերից հրաժարումը կամ քննության և ապացուցման խնդիրների վերաճումը հանցակազմի տարրերի, որոնք ենթադրվում են ի վնաս մեղադրյալի:

Ընդհանուր առմամբ, ինչպես արդեն նշվել է, իրավաչափ համարելով մեղադրյալի վրա որոշակի ապացուցման բեռ դնելը, քննարկվող հանցակազմի առնչությամբ հնարավոր խնդիրների առաջացումը մեծապես կախված է նաև այն հանգամանքից, թե ապացուցման ինչ բեռ է դրվելու մեղադրյալի վրա: Հարց է ծագում, թե արդյոք պաշտպանության կողմն իր անմեղությունն ապացուցելու, թե հակառակը՝ եկամտի օրինական ծագման մասին ողջամիտ կասկած առաջացնելու համար բավարար ապացույցներ ներկայացնելու պարտականություն է կրելու: Մասնավորապես, քննարկման կարիք ունի այս հարցը. եթե մեղադրյալը ներկայացնում է նման ապացույց, ապա արդյո՞ք մեղադրանքի կողմը պետք է հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան ապացույցներ ներկայացնի: Կամ արդյո՞ք, այնուամենայնիվ, եթե ապացուցման բեռը որոշակի առումով դրված է նաև պաշտպանության կողմի վրա, ապա չնայած մեղադրանքի կողմը պետք է հիմնավոր կասկածից վեր հիմնավորի հանցակազմի բոլոր տարրերը, պաշտպանության կողմից, այդ բեռին համապատասխան, որևէ ապացույց չներկայացնելը կարող է դատարանի կողմից ի վնաս անձի մեկնաբանվել:

Այն մոտեցման շրջանակներում, համաձայն որի ապօրինի հարստացման հանցակազմի շրջանակում մեղադրյալի վրա ապացուցման բեռ դնելը չի հակասում անմեղության կանխավարկածի սկզբունքին, ապացուցման բեռի տեսանկյունից

գաղափարն այն է, որ եթե հանցակազմի հիմնական տարրերն ապացուցված են, ապա առաջանում է մեղադրանքի կողմի ապացույցները հերքելու և մեղադրանքի դեմ լրացուցիչ փաստեր ապացուցելու պարտականություն: Այս մոդելի շրջանակում, եթե ապացուցվում է, որ որպես մեղադրյալ ներգրավված հանրային ծառայողն ունի գույք, որը գերազանցում է իր հայտնի օրինական եկամուտները, վերջինիս վրա կարող է դրվել այդ գույքի՝ օրինական աղբյուրներից ստացված լինելու բեռի ապացուցման պարտականություն:

Այս մոտեցումը տեղայնացնելով ՀՀ գործող քրեական օրենսգրքում քննարկվող հանցակազմի դիսպոզիցիայի վրա՝ ակնհայտ է, որ մեղադրանքի կողմն առնվազն հետևյալ հանգամանքները բացահայտելու բեռ է կրում.

- 1** ենթադրյալ հանցանք կատարողի՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ լինելու կարգավիճակը,
- 2** հաշվետու ժամանակահատվածում վերոնշյալ անձի ստացած օրինական եկամուտները,
- 3** հաշվետու ժամանակահատվածում վերոնշյալ անձի գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը, և որ դրանք էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները և ողջամտորեն չեն հիմնավորվում դրանցով:

Ընդ որում, անձին առաջադրվող մեղադրանքում պետք է բացառվի նաև ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող այլ հանցագործության հատկանիշների բացակայությունը:

Ապացուցման ենթակա վերոնշյալ հանգամանքներից որոշակի տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տալիս մեղադրանքի կողմի՝ ենթադրյալ հանցանք կատարած անձի օրինական եկամուտներն ապացուցելու պարտականությունը: Մասնավորապես, քննարկվող հարցը հետևյալն է. արդյոք դատախազը պետք է ապացուցի մեղադրյալի այն օրինական եկամուտը, որ գոյանում է աշխատավարձից և այլ փոխկապակցված վճարներից, թե՛ նաև պետք է անդրադառնա այլ օրի-

նական եկամուտների առկայությանը (ժառանգություն, մրցանակներ, մասնավոր ներդրումներից այլ եկամուտներ) (5):

Հաշվի առնելով, որ քննարկվող հանցակազմի սուբյեկտը «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձինք են, մեղադրանքի կողմը կարող է սահմանափակվել հայտարարագրում ներկայացված օրինական եկամտի աղբյուրներով: Այլ հարց է, որ ենթադրյալ հանցանք կատարած անձի կողմից օրինական եկամտի այլ աղբյուրներ վկայակոչելու պարագայում դարձյալ ծագում է մեղադրանքի կողմի՝ այդ եկամտի օրինական լինելու ուղղությամբ քննություն իրականացնելու և հակառակ դիրքորոշումը հիմնավորելու համար անհրաժեշտ և բավարար փաստական տվյալներ ներկայացնելու պարտականությունը: ՄԻՆԶ ԱՅՍՏԵՂ

Տեսության մեջ անմեղության կանխավարկածի՝ միջազգային և ներպետական տարբեր ձևակերպումների համակցված վերլուծության արդյունքում առանձնացվում են կանխավարկածի հետևյալ մոդելները.

Գնահատեք կանխավարկածի Նշված մոդելների կիրառելիությունը:

1 անհերքելի կամ վերջնական կանխավարկած. այս մոդելը պահանջում է դատախազից ապացուցել մեղադրյալի հավելյալ (ոչ համաչափ) գույքը, որը գերազանցում է վերջինիս օրինական եկամուտները: Նշված պահանջը հաջողությամբ իրացնելու պարագայում դատարանից պահանջվում է վերջնական եզրահանգում անել հավելյալ գույքի ապօրինի ծագման կամ դրա ոչ օրինական լինելու մասին:

2 պայմանական կանխավարկած. այս մոտեցումը պահանջում է դատախազից ապացուցել օրինական եկամուտները գերազանցող հավելյալ գույքի առկայության փաստը: Այդ

մոդելի շրջանակում դատարանը հայեցողական լիազորություն ունի եզրահանգում անել հավելյալ գույքի՝ ոչ օրինական աղբյուրներից ծագելու մասին:

3 ապացուցողական կանխավարկած. այս մոդելը պահանջում է դատախազից ապացուցել օրինական եկամուտները գերազանցող հավելյալ գույքի առկայության փաստը: Այնուհետև դատարանից պահանջվում է առաջ քաշել հավելյալ գույքի՝ ոչ օրինական աղբյուրներից ծագելու մասին հերքելի կանխավարկած.

4 համոզիչ կանխավարկած. այս մոդելը պահանջում է դատախազից ապացուցել օրինական եկամուտները գերազանցող հավելյալ գույքի առկայության փաստը: Այնուհետև այն պահանջում է մեղադրյալից ներկայացնել գույքի՝ օրինական աղբյուրներից ծագելու վերաբերյալ որոշակի ապացույցներ և համոզել դատարանին, որ գույքն իրավամբ ծագում է օրինական աղբյուրներից: Ինչ վերաբերում է դատարանին, ապա վերջինիցս պահանջվում է եզրահանգում անել համապատասխան գույքի ոչ օրինական ծագման մասին, եթե մեղադրյալը չի ապացուցել հակառակը (6):

Կանխավարկածների այս տեսակները տեղայնացնելով մեր ներպետական օրենսդրությամբ ապօրինի հարստացման հանցակազմի շրջանակում մեղադրյալի ունեցած ապացուցման բեռի վրա՝ ակնհայտ է, որ ՀՀ ներպետական կարգավորումները պարունակում են ապացուցման ենթակա կանխավարկածի մոդելի տարրեր: Վերոնշյալը հիմնավորվում է նրանով, որ քննարկվող հանցակազմի օրենսդրական բնորոշման պայմաններում մեղադրյալի վրա ապացուցման բեռ ուղղակիորեն չի դրվում, սակայն հավելյալ գույքի՝ օրինական կամ ոչ օրինական աղբյուրներից ծագած լինելու հարցը բաց է ապացուցման համար, և համապատասխան հետևության դատարանը կարող է հանգել մեղադրանքի և պաշտպանության կողմի ներկայացրած ապացույցների համակցության մեջ տրված գնահատականի հիման վրա:

Ապօրինի հարստացման հանցակազմի անմեղության ապացուցման որոշակի բեռի առկայությունը խնդիրներ է առաջացնում նաև լռություն պահպանելու իրավունքի և ինքնամերկացման արգելքի հետ կապված: Այս իրավունքը կոչված է

մեղադրյալին երաշխավորելու ցուցմունք տալուն հարկադրելուց: Ընդ որում, լուրջ-
յունը, որպես կանոն, չի կարող մեկնաբանվել ի վսաս անձի:

Հաշվի առնելով, որ ապօրինի հարստացման դեպքում ապացուցման բեռի
բաշխման կանոնները պահանջում են բավարար չափով բացատրություններ ներ-
կայացնել եկամուտների ծագման օրինականության վերաբերյալ՝ լուրջյուն պահ-
պանելը, ըստ էության, կարող է անձի համար որոշակի խնդիրներ առաջացնել և
հանգեցնել վերջինիս մեղքը հաստատված համարելուն: Այլ կերպ՝ մեղադրյալը
դառնում է իր իսկ մեղավորության ապացուցման աղբյուրը:

Մեղադրյալը կանգնում է նաև ինքնամերկացման հնարավոր վտանգի առջև,
քանի որ վերջինս կամ պետք է համապատասխան ապացույցներ ներկայացնի կամ
ենթարկվի քրեական պատասխանատվության: Այսպես, օրինակ, հնարավոր է, որ
մեղադրյալի կողմից իր եկամուտների ստացման աղբյուրների վերաբերյալ տեղե-
կություններ ներկայացնելու արդյունքում վերջինս թեև ապօրինի հարստացման
համար քրեական պատասխանատվության չենթարկվի, այդուհանդերձ, ենթարկվի
վարչական, քաղաքացիական կամ նույնիսկ քրեական պատասխանատվության՝ այլ
իրավախախտման համար: Հնարավոր է, որ անձն իր եկամուտները պատշաճ հայ-
տարարագրած չլինի և իր կողմից որոշակի ապացույցներ ներկայացնելու արդյուն-
քում պատասխանատվության ենթարկվի հարկային հանցագործության համար:



- 1** Калиновский К.Б., Смирнов А.В. Презумпции в уголовном процессе. // Российское правосудие. 2008. N 4, էջ 68-74,
<http://kalinovsky-k.narod.ru/p/2008-1.htm>
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)
- 2, 4** Ս.Ա. Դիլբանդյան, Անմեղության կանխավարկածը և ապացուցման պարտականությունը քրեական դատավարությունում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու: Գլխ. խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. Եր., ԵՊՀ, 2017, էջ 442,
<http://ysu.am/files/26Dilbandyan.pdf>
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)
- 3** Եվրոպական դատարանի՝ Salabiaku v. France գործով 1988թ.-ի հոկտեմբերի 7-ի վճիռը, գանգառ թիվ 10519/83, 28-րդ կետը,
<https://swarb.co.uk/salabiaku-v-france-echr-7-oct-1988/>
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)
- 5, 6** Burdens and Standards of Proof in Possession of Unexplained Property Prosecutions,
<https://www.ajol.info//index.php/mlr/article/view/111729>
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

ԲԱՌԱՐԱՆ



Այս հատվածում ներկայացված են դասի նյութին առնչվող առանցքային եզրույթները և դրանց բացատրությունները: Դրանք Ձեզ կօգնեն դասի նյութն ավելի հեշտ ընկալել: Եզրույթների բովանդակությունն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 10 րոպե:

ԱՊԱՑՈՒՑՈՂԱԿԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾ — Դատախազը պարտավոր է ապացուցել օրինական եկամուտները գերազանցող հավելյալ գույքի առկայության փաստը, իսկ դատարանից պահանջվում է առաջ քաշել հավելյալ գույքի՝ ոչ օրինական աղբյուրներից ծագելու մասին հերքելի կանխավարկած:

ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄ — «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի՝ հաշվետու ժամանակահատվածում գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը, որոնք էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները և ողջամտորեն չեն հիմնավորվում դրանցով:

ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾ — Իրավաբանական փաստերից բխող դատողություն մեկ այլ իրավաբանական փաստի մասին:

ՀԱՄՈՋԻՉ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾ — Դատախազը պարտավոր է ապացուցել օրինական եկամուտները գերազանցող հավելյալ գույքի առկայության փաստը, մեղադրյալը՝ ներկայացնել գույքի՝ օրինական աղբյուրներից ծագելու վերաբերյալ որոշակի ապացույցներ և համոզել դատարանին, որ գույքն իրավամբ ծագում է օրինական աղբյուրներից, իսկ դատարանից պահանջվում է եզրահանգում անել համապատասխան գույքի ոչ օրինական ծագման մասին, եթե մեղադրյալը չի ապացուցել հակառակը:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾ — Դատախազը պարտավոր է ապացուցել օրինական եկամուտները գերազանցող հավելյալ գույքի առկայության փաստը, իսկ դատարանը հայեցողական լիազորություն ունի եզրահանգում անել հավելյալ գույքի՝ ոչ օրինական աղբյուրներից ծագելու մասին: